


## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

**Հունվարի 28-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Թորգոմ վրդ. Մուշեղյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ «Տէր լոյս իմ և կեանք իմ ես յումմէ երկեալց, Տէր ապաւէն կենաց իմոց ես յումմէ թողացայց» (սաղմոս) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

**Հունվարի 31-ին, չորեքշաբթի.**—Այսօր, երեկոյան, Վեհարանում տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում զեկուցեց Ստեփանոս սրկ. Զաքալյանը՝ մահվան և անմահության գաղափարը Նոր Կտակարանում ու Պլատոնի երկերում թեմայի շուրջ:

*
* *

**Փետրվարի 1-ին, հինգշաբթի.**—Այսօր, երեկոյան ժամը 17-ին, հրաժեշտ առնելով Վեհափառ Հայրապետից և Մայր Աթոռից, շուրջ տասը օր ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվելուց հետո, Փարիզ՝ իր պաշտոնատեղին մեկնեց Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակի փոխանորդ տ. Գյուտ եպս. Նագգաշյանը:

Սրբազան հորը Երևանի օդանավակայանում ճանապարհեցին տ. Մյուռոն և տ. Առաքել աբեղաները:

*
* *

**Փետրվարի 4-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում իր անդրանիկ ս. պատարագն է մատուցում տ. Մյուռոն աբղ. Գրվրգյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ «Ի քեզ Տէր յուսացայ, զի մի ամաչեցից յաւիտեան» (սաղմոս) բնաբանով:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվեց հոգեհանգստյան պաշտոն նորոգ հանգուցյալ տ. Մկրտիչ ավագ քհն. Մկրտչյանի և հայտնի քանդակագործ ու նկարիչ Երվանդ Քոչարի հոգիների համար:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունեց երկու հանգուցյալների հարազատներին և սուրբ Հոգով մխիթարեց նրանց:

*
* *

**Փետրվարի 7-ին, չորեքշաբթի.**—Այսօր, երեկոյան, Վեհարանում տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում նախ քննարկվեց տ. Մյուռոն աբեղայի մատուցած անդրանիկ պատարագի և ուխտի քարոզը: Այդ մասին Վեհափառ Հայրապետը և ներկաները իրենց կարծիքներն ու տպավորությունները հայտնեցին:

Այնուհետև զեկուցումով հանդես եկավ վերջերս Քինգսթոնից (Յամայկա) վերադարձած տ. Արսեն եպս. Բերբերյանը, որը հանգամանորեն խոսեց ԵՀԽ-ի այս տարվա գործունեության և հետագա ծրագրերի մասին:

*
* *

**Փետրվարի 11-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում իր անդրանիկ ս. պատարագն է մատուցում տ. Առաքել աբդ. Գալայջյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ «Ամենասուրբ Երրորդություն, հաս օգնութիւն ծառայից քոց, լեր օգնական ազգիս հայոց» (մաղթանք) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

**Նույն օրը** Մայր Աթոռ ժամանեց Փարիզի ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում ծառայող, Մայր Աթոռի միաբան տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը:

* *
*

**Փետրվարի 13-ին, երեքշաբթի.—Նախատոնակ:**

Այսօր, երեկոյան ժամը 17-ին, հավարտ ժամերգության, կատարվում է նախատոնակը Տեառնընդառաջի, Քրիստոսի քառասնօրյա տաճար գալստյան տոնի, և ապա տեղի է ունենում անդաստանի արարողություն՝ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ:

Ժամը 19.30-ին հոգևոր ճեմարանի հանդիսակացարանի բակում բոցավառվում է ավանդական խարույկը, որի շուրջ տեղի են ունենում ուսանողության երգ ու պար:

Ժամը 20-ին միաբանական սեղանատանը տրվում է ավանդական ճաշ, որին ներկա էին ողջ միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը և ուսանողությունը:

*
* *

**Փետրվարի 14-ին, չորեքշաբթի.—Տեառնընդառաջ. Տօն քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի ի տաճարն.**

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Արտակ քհն. Սիմոնյանը:

*
* *

**Նույն օրը,** երեկոյան, Վեհարանում տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում նախ քննության է առնվում տ. Առաքել աբդ. Գալայջյանի ուխտի անդրանիկ պատարագն ու քարոզը, ապա զեկուցումով հանդես է գալիս՝ վերջերս Փարիզից ժամանած Մայր Աթոռի միաբան տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը և ամփոփ ներկայացնում ֆրանսահայ գաղութի եկեղեցական-ազգային, կրթական կյանքը:

*
* *

**Փետրվարի 18-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ «Եթէ ոք ծարաւի իցէ, եկեսցէ առ իս և արբցէ» (Հովհ. Է 37) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

**Փետրվարի 21-ին չորեքշաբթի.**—Այսօր, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, Փարիզ մեկնեց տ. Առաքել աբդ. Գալայջյանը՝ շարունակելու իր ուսումը տեղի աստվածաբանական համալսարանում ու միաժամանակ ծառայելու նույն քաղաքի հայոց եկեղեցիներից մեկում՝ գերաշն. տ. Սերովբե արքեպիսկոպոսի կարգադրությամբ:

*
* *

**Նույն օրը,** երեկոյան, Վեհարանում տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում քննարկվում է Գրիգորիս վարդապետի՝ կիրակի օրվա քարոզը:

*
* *

**Փետրվարի 22-ին, հինգշաբթի.**—Այսօր, Վեհափառ Հայրապետի հրավերով, Մայր Աթոռ է այցելում «Նաիրի» թերթի խմբա-

գիր, գրող Անդրանիկ Ծառուկյանը, որը Բեյրութից Երևան էր ժամանել փետրվարի 21-ի երեկոյան:

Երևանի օդանավակայանում հարգելի հյուրին դիմավորում է Դերենիկ սրկ. Սաքյանը:

*
* *

**Փետրվարի 23-ին, ուրբաթ.**—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

*
* *

**Փետրվարի 25-ին, կիրակի.—Բուն Բարեկենդան.**

Այսօր Մայր տաճարում, փակված խորանի առաջ, ս. պատարագ է մատուցում տ. Եղիշե քհն. Բաղրամյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ «Սէր անուն Յիսուս, սիրով քով ճմլեա, սիրտ իմ քարեղէն» (Ն. Շնորհալի) բնաբանով:

*
* *

**Նույն օրը,** ս. պատարագից հետո, հոգևոր ճեմարանի ուսանողները եռօրյա պրոտոյտի մեկնեցին դեպի Ծաղկաձոր:

*
* *

**Փետրվարի 28-ին, չորեքշաբթի.**—Այսօր, երեկոյան, Վեհարանում տեղի է ունենում միաբանական հերթական հավաք, որի ընթացքում Վեհափառ Հայրապետը խոսում է Վերածնության դերի մասին քաղաքակրթության զարգացման գործում:

Վերջում Վեհափառ Հայրապետը բարեհաճում է պատասխանել միաբաններին հետաքրքրող հարցերին: